տնահկաց եւ աղքատաց, վասն սիրոյ փրկութեան ազգին հայոց 'ի լծորդութենէ բարբառոսաց, այս հատուցումն ոչ հարկադրեմ եթէ ոչ աղաչանօք խնդրեմ:

Յաւել քան զայս պաղատեմ առ քեզ Տէր եւ Արարիչ իմ զի եթէ ազգն հայոց ոչ համարիս արժանի փրկութեան 'ի լծորդութենէ ծառայութեան այլ ազգաց՝ ուրեմն խնայեա՛ նոցա զի ընդէմ Քրիստոնէական հաւատոյ մի պահիցեն 'ի սրտի իւրեանց նախանձ ընդ այլ ազգս որ ունին ազատութիւն 'ի յերեսս երկրի եւ շվարում մի մեծ 'ի միտս 'ի վերայ անհուն ողորմութեան քոյ, թէպէտ աշխարհն մեր 'ի ներքոյ կենդանակերպին առջոյ եւ մեք իբր ազգաւ ոչ հեռի 'ի կարծրութենէ նոյնոյ բնութեան երկայն ժամանակաւ 'ի միջէ մերմէ ոչ ոք կարողացաւ իմաստութեամբ խորհելով բացատրէր մեզ պատճառն մերոց անտերունչ մնալն, որովհետեւ որ իմաստութիւն մեր ո՛չ բաւ է Օգնական մեզ լինիլ, ուրեմն Դու Տէր եւ Արարիչն մեր որ ծագեցուցանես արեգակն քոյ 'ի լուսատվութիւն առ հասարակ իմաստնոց եւ տգիտաց, եւ անձրեւն քոյ ցողեցուցանես 'ի վերա բարեաց եւ չարեաց, ուրեմն մեք յումեքէ ակնկալ լինիցիմք փրկել մեզ 'ի ծառայութենէ բայց 'ի քէն Տէր, ուրեմն կամ տուր մեզ ազատութիւն, որպէս ամենայն երջանիկ ազգս 'ի երեսս երկրի, կամ ներեա՛